# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**2024 թվականի մասնակցային բուջետավորման գործընթացի շրջանակներում Ջերմուկ համայնքից ներկայացված առաջարկ-նախագծերի վերաբերյալ հանրային քննարկման**

**N 1**

ք. Ջերմուկ 21.02.2024թ.

2024 թվականի փետրվարի 21-ին ժամը 12:00-ին Ջերմուկի քաղաքապետարան խորհրդակցությունների դահլիճում տեղի ունեցավ 2024 թվականի մասնակցային բուջետավորման գործընթացի շրջանակներում Ջերմուկ համայնքից ներկայացված առաջարկ-նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում: Հանրային քննարկումը կազմակերպվել է ՀՀ կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը» հաստատելու մասին № 1890-Ն, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ 15-Ն որոշումներին համապատասխան:

Հանրային քննարկման հրավերը հրապարակվել է Ջերմուկի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Մասնակցում էին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վ. Սարգսյանը, տեղակալ Ա. Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը, գլխավոր մասնագետներ՝ Ս. Վարդանյանը, Ս. Պապոյանը, ՀՀ ՖՆ բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի պետի պաշտոնակարար Ս. Հարոյանը, ՀՀ ՖՆ բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ Է. Բաղդասարյանը, ՀՀ ՏԿԵՆ համայնքային բյուջեների բաժնի պետ Լ. Մուրադյանը և Ջերմուկ համայնքի բնակիչներ:

**Օրակարգում՝**

Ջերմուկ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում ներկայացված տասնհինգ առաջարկ-նախագծեր՝

1. «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման ծրագիր, հեղինակ՝ Սիրվարդ Հակոբյան,
2. Ջերմուկ քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի բարեկարգում, հեղինակ՝ Արտուշ Սիմոնյան,
3. Ջերմուկի քաղաքային զբոսայգու բարեկարգում, հեղինակ՝ Վարուժան Սարգսյան,
4. Գնդեվազ բնակավայրի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգման ծրագիր, հեղինակ՝ Մեսրոպ Հարությունյան,
5. Գնդեվազ բնակավայրի աղբահանության իրականացման վերաբերյալ ծրագիր, հեղինակ՝ Վանիկ Մկրտչյան,
6. Մանկապարտեզի մեկ խմբի վերանորոգում, կահավորում, զարգացնող միջավայրի ստեղծում, հեղինակ՝ Աննա Թադևոսյան,
7. Ջերմուկը և շախմատը, հեղինակ՝ Ոսկինե Ավագյան,
8. Արմաթն օդում, հեղինակ՝ Սիփան Դանիելյան,

9. Ջերմուկի Վիքիակումբի վերազինում և արդիականացում, հեղինակ՝ Իրինա Մնացականյան,

10. Մշակութային տելեպորտալ, հեղինակ՝ Իրինա Մնացականյան,

11. «ԱյԹի Ջերմուկ» / IT Jermuk, հեղինակ՝ Արթուր Զաքարյան,

12. Գրադարանի տարածքի բարեկարգում արհեստական լճակների կառուցում, հեղինակ՝ Հրայր Մկրտչյան,

13. Երիտասարդական կենտրոնի բարելավման ծրագիր, հեղինակ՝ Հրայր Մկրտչյան,

14. Ջերմուկ քաղաքում գունաձայնային երգող շատրվաններ, հեղինակ՝ Արփինե Ստեփանյան,

15. Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցանում, հեղինակ՝ Արփինե Ստեփանյան:

**Ելույթներ՝**

Ելույթ ունեցավ Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վ. Սարգսյանը, ով ներկայացրեց, որ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը» հաստատելու մասին № 1890-Ն որոշումը փորձարկվում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, Արմավիրի մարզի Արմավիր, Կոտայքի մարզի Աբովյան և Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքներում: Դրա շրջանակներում ձևավորված ծրագրերի իրականացման համար Ջերմուկ համայնքի համար հաշվարկված գումարը կազմում է 71.845.600 (յոթանասունմեկ միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ պետական ֆինանսավորման գումարի առնվազն 20 տոկոսից համայնքային բյուջեից համաֆինանսավորմամբ:

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը հայտնեց, որ Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբեր 27-ի № 107-Ա որոշմամբ Ջերմուկ համայնքում 2024 թվականին սկսվել է մասնակցային բյուջետավորման գործընթացը, իսկ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 22-ի № 21-Լ որոշմամբ հաստատվել են Ջերմուկ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացնելու, գործընթացի կառավարման հանձնաժողովի կազմը, լիազորությունները և աշխատակարգը: Ջերմուկ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում, Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 17-ի № 14-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցին համապատասխան, համայնքապետարանի պաշտոնական կայքէջի «Մասնակցային բյուջետավորում-2024» բաժնով ներկայացվել է տասնհինգ առաջարկ-նախագիծ, որոնց հեղինակներին առաջարկվեց ներկայացնել դրանք:

«ԱյԹի Ջերմուկ» / IT Jermuk-ի հեղինակ Արթուր Զաքարյանը առաջարկ-նախագիծը ներկայացրել է առանց՝ «Zoom» հարթակի օգնությամբ: Ներկա չէր նաև «Ջերմուկ քաղաքում գունաձայնային երգող շատրվաններ» և «Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցանում» առաջարկ-նախագծի հեղինակ Արփինե Ստեփանյանը, ում առաջարկ-նախագծերը ներկայացրեց Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը:

ՀՀ ՖՆ բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ Է. Բաղդասարյանը նշեց, որ բոլոր ծրագրերը պետք է բխեն Հայաստանի

Հանրապետության կառավարության ծրագրից և համապատասխանեն համայնքի զարգացման ծրագրային և ռազմավարական նշանակության փաստաթղթերին, լինեն կապիտալ բնույթի և ավարտվեն 2024 թվականի ընթացքում:

Քննարկումների արդյունքում ներկայացված ծրագրերը մասնակիցների կողմից արժանացան հավանության, դրանց վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեն արվել:

Քննարկումների մասնակիցների ցուցակը կցվում է:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝
Ա. Ղազարյան

Արձանագրող՝

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝
Ս. Վարդանյան

Նախաձեռնող՝ Ջերմուկի համայնքապետարան

ՑՈՒՑԱԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

| Հ/Հ | Մասնակցի անունը, ազգանունը | Հասցեն | Հեռախոսահամար | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Հրայր Մկրտչյան | | | |
| 2 | Միհրան Պապաջանյան | | 077 388 548. | [signature] |
| 3 | Արփիկ Թավաքալյան | | 098 977 699 | [signature] |
| 4 | Ռաֆիկ Ավագյան | | 091733633 | [signature] |
| 5 | Լիանա Թամրազյան | | 094 946 949 | [signature] |
| 6 | Մարատ Հարությունյան | | 094919487 | [signature] |
| 7 | Ասյա Խաչատրյան | | 098 94 59 84 | [signature] |
| 8 | Լաուրա Ազարյան | | 098-66-66-22 | [signature] |
| 9 | Լևոն Քալանթարյան | | 093932303 | [signature] |
| 10 | Արթուր Մկրտչյան | | 093706005 | [signature] |
| 11 | Կարինե Սարգսյան | | 094050406 | [signature] |
| 12 | Արմենակ Խաչիկյան | | 041220800. | [signature] |
| 13 | [illegible] | | 098 013959 | [signature] |
| 14 | Ալբերտ Բաղդասարյան | | 093991927. | [signature] |
| 15 | Ժորա Եգորյան | | 091484348 | [signature] |
| 16 | Տիգրան Բաղդասարյան | | 091961619 | [signature] |
| 17 | Գայանե Կարապետյան | | 091500262 | [signature] |
| 18 | Նինա Թադևոսյան | | 091555584 | [signature] |
| 19 | Գոհար Քալանթարյան | | 077677233 | [signature] |
| | | | 098 140371 | [signature] |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | Ігнат Дмитрович | | 094 994 224 | |
| 21 | Андрій Миронович | | | |
| 22 | Ілля Миронович | | 033 163-165 | |
| 23 | Ігорь Журавський | | 093-64-72-22 | |
| 24 | Ігнат Захарович | | 094011510 | |
| 25 | Ігнатьєвна Миронович | | 098442412 | |
| 26 | | | 072.572.560 | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| 31 | | | | |
| 32 | | | | |
| 33 | | | | |
| 34 | | | | |
| 35 | | | | |
| 36 | | | | |
| 37 | | | | |
| 38 | | | | |
| 39 | | | | |
| 40 | | | | |
| 41 | | | | |